Եւ եղեւ 'ի դառնալ նորա 'ի վանս՝ հասին զկնի նորա 12 զրահաւորեալ հայթայ, և կացին 'ի դուռն վանաց, և սկըսան աղաղակել և հայհոյել. 28 անձինք եւս դան զկնի մեր, պատրաստեցէք 40 արանց կերակուր եւ անկողին, զի ոչ ելանեմք աստի մինչեւ առցուք զդրամն. և յաղաչել դըռնապանին և Թարգմանին հանդարտել, նոքա զկնս ցուցանէին, եւ զոմանց կալեալ զմօրուս, կախեմք կտրեմք ասէին, ապա թէ ոչ, փութով դրամ. փութաց Փոխանորդն 'ի Դուռն և ողոքէր զնոսա 'ի խաղաղութիւն, և նոցա թողեալ զայլս՝ կալան զնա և սկսան անարգել և հայհոյել. զայն տեսեալ Փոխանորդին էառ ընդ իւր և զոմանս 'ի վարդապետաց փութաց առ Քաղաքապետն, և աղաչէր զնա բառնալ անտի զզօրսն մինչեւ պատրաստեսցեն զդրամն. չեւ եւս աւարտեալ Փոխանորդին զբան իւր, համարձակ բանիւք յարձակեցաւ 'ի վերայ նորա, եւ սկսաւ նախատել զնա անասելի բանիւք, անարգելով զկարգ, ըզկրօն և զհաւատս իսկ, մինչեւ ժայթքել 'ի բերանոյ իւրմէ անարգական բանս այնոցիկ, որ զհրովարտակն ետ, գրեաց և ընթերցաւ, եւ այսպիսի անարգութեամբ արտաքսեաց զնա 'ի սենեկէ անտի։ Մինչչեւ հեռացեալ նոցա անտի, հասին անդ և այլ վարդապետք և միաբանք բոզոք բարձեալ զանկարգութենէ զօրաց եղելոց 'ի վանս, և լուեալ զբանս նոցա, դիմեցին առ Դատաւորն՝ ժամ 12, և բոզոք կալեալ աղաչէին զնա տալ Իլամ. զի այլ եւս անհնարին էր մնալ նոցա 'ի քաղաքի անդ։ Իսկ այրն խոհական՝ ողոքական բանիւք աղաչէր զնոսա հանդարտիլ, եւ ետ կոչել զզօրապետն, որոյ եկեալ առաւել քան զվարդապետսն պատմեաց զանպատեհ գործս Քաղաքապետին, և հարկադրեալ զնա առաքեաց ընդ պաշտօնէի իւրոյ, և ետ հանել զհայթայ զօրս 'ի վանաց 'ի գիշերի ժամ 2, և միաբանք դարձան 'ի տեղիս իւրեանց։ Եւ 'ի վաղիւն պատուէր տուեալ միաբանաց եւ ուխտաւորաց ոչ բացին ըզդուռն վանաց, և պատրաստեցան բոլոր միաբանիւք ելանել 'ի ճանապարհ. իբրեւ լու եղեւ Քաղաքապետին, փութացին Նախիսն և Դպրապետ դատարանի 'ի դրանէ Հրեշտակապետի մտին 'ի ներքս, և սկսան աղաչել 'ի կողմանէ Դատաւորին և ամենայն այլազգեաց բանալ զդուռն և հան-